ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
N 2

ք. Կապան «15» հունվարի 2020թ

ՀՀ Սյունիքի մարզպետարանը ի դեմս գլխավոր քարտուղար Է. Մարտիրոսյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ դրամաշնորհ տրամադրող), մի կողմից և Կապանի «Ա.Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ը՝ ի դեմս տնօրեն Տ. Աթայանը, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ դրամաշնորհ ստացող) մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 26.12.2019թ թիվ 1919-Ն որոշումը կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Պատվիրատուն Կատարողին պահպանման ծախսերի համար հատկացնում է 85195.5 հազ. /Ութսունհինգ միլիոն հարյուր իննսունհինգ հազար հինգ հարյուր / ՀՀ դրամ , այդ թվում ԱԱՀ-ն՝ 14199.3 հազ.դրամ:

2.Գումարը տրամադրելու և ծախսելու կարգը

2.1. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան :
2.2.Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան և ապահովի սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված նպատակների իրականացման հետ կապված փաստաթղթերին ծանոթանալու՝ Պատվիրատուի ներկայացուցչի հնարավորությունը:
2.3. Սույն պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո Պատվիրատուն սույն պայմանագրի 1.1. կետում նշված գումարը ըստ հավելվածի փոխանցում է Կատարողի ընթացիկ հաշվին:

3.Հաշվետվությունը

3.1. Հաշվետվությունը ներկայացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Այլ դրույթներ

4.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 25.12.2020թ.:
4.2.Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ , որը կնքվում է գրավոր:
4.3. Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5.Կողմերի իրավաբանական հասցեները

Դրամաշնորհ տրամադրող	Դրամշնորհ ստացող
ՀՀ Սյունիքի մարզպետարան	Կապանի «Ա.Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ
Ք.Կապան Նժդեհի 1	Ք. Կապան
ՀՀ ֆին.նախ. գործառն. վարչ	ՀՀ ֆին.նախ. գործառն. վարչ
հ/հ 900311[illegible]	հհ 900318000016
հհվհ 094[illegible]	հհվհ 09401733
_____ Է. Մարտիրոսյան	_____ Տ.Աթայան